# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.10.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2017/50**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16949-17 գրությամբ «Սանլորետ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.09.2017թ. թիվ 01/61-18641 գրության հիման վրա, 20.09.2017թ. թիվ 03/26-3/16949-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Սանլորետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 12.09.2017թ. թիվ 01/61-18641 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է «Սանլորետ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն): Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես, ներկայացված փաստաթղթերում նշված է «Սանլորետ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Գևորգյան, սակայն փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Էդվարդ Շահբազյանի կողմից և ներկայացված հայտում բացակայում է վերջինիս նման լիազորության վերապահելու փաստը հավաստող փաստաթուղթը:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4 թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի կողմից մեկ աշխատանքային օրով կասեցվել է բացման նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցվել Ընկերությանն՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել վերոնշյալ անհամապատասխանությունը, և համաձայն Կարգի 42-րդ կետի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է անբավարար և մերժվել»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Անի Համբարձումյանը:

3. **<u>«Սանլորետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

«Սանլորետ» ՍՊԸ-ն 26.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված և անցկացված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու ժամանակ «Սանլորետ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերում կատարվել է անհամապատասխանություն, որը ժամանակին չենք

նկատել և նշված ժամանակահատվածում չենք ներկայացրել Էդվարդ Շահբազյանի կողմից էլեկտրոնային ստորագրություն դնելու թույլտվությունը լիազորող փաստաթուղթը»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Վարդան Գևորգյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2017/50 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 2220.09.2017թ. թիվ 03/26-3/16949-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.09.2017թ. թիվ 01/61-18641 գրությունը, «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.09.2017թ. նիստի N 2 և 08.09.2017թ. նիստի N 3 արձանագրությունները, Ընկերության կողմից 26.09.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«Սանլորետ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը՝

- 06.09.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.2 կետով արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում նշված է «Սանլորետ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Գևորգյան, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Էդվարդ Շահբազյանի կողմից, ներկայացված փաստաթղթերում բացակայում է վերջինիս նման լիազորություն վերապահելու փաստը հավաստող փաստաթուղթը:

Նույն արձանագրությամբ որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընկերությանը մինչև 07.09.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը:

- 08.09.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված

անհամապատասխանությունը և որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը,
- 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 40-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը,
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,

Հրավերի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սանլորետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն ստորագրվել է Էդվարդ Շահբազյանի կողմից, սակայն հայտում բացակայել է վերջինիս կողմից հայտը ներկայացնելու և/կամ հայտում ներառված փաստաթղթերն ստորագրելու լիազորությունը հավաստող որևէ փաստաթուղթ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը՝ առաջարկելով «Սանլորետ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ մասով և 41-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության հայտում ներառված՝ գնային առաջարկում և հայտի ապահովման մեջ արձանագրված անհամապատասխանությունները շտկման ենթակա չեն, ուստի և Ընկերության հայտը ենթակա էր մերժման՝ գնային առաջարկը և հայտի ապահովումը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սանլորետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16949-17 գրությամբ «Սանլորետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝**

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ